Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում,
արձանագրություն N 3,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ. Լ. Աթոյան
«01» _____ 2016 թ.

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) գիտական խորհրդին կից համալսարանական մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատակարգը մշակված է ըստ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքների, «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություն-ներում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշման, համալսարանի կանոնադրության և այլ ներքին իրավական ակտերի, համալսարանի գիտական խորհրդում ընդունված որոշումների և սահմանում է հանձնաժողովի հիմնական խնդիրները, կազմն ու հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման կարգը:

2. Հանձնաժողովի խնդիրն է համալսարանի պրոֆեսորի, դոցենտի և ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթների կազմակերպումը, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների հայցման հավակնորդների փաստաթղթերի ուսումնասիրությունը և դրանց վերաբերյալ եզրակացությունը համալսարանի

գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելը:

3. Հանձնաժողովն իրավունք ունի համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր:

2. Մրցութային հանձնաժողովի կազմը և կառուցվածքը

4. Հանձնաժողովի կազմը և կառուցվածքը որոշում է համալսարանի գիտական խորհուրդը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են գիտական խորհրդի անդամ պրոֆեսորներ և դոցենտներ: Ի պաշտոնե հանձնաժողովի կազմում ընդգրկվում է գիտական քարտուղարը, ով նաև հանձնաժողովի քարտուղարն է:

5. Հանձնաժողովի նախագահն ու անդամները ընտրվում են գիտական խորհրդում՝ ռեկտորի ներկայացմամբ: Հանձնաժողովի նախագահը կազմակերպում և համակարգում է հանձնաժողովի աշխատանքները, հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնում համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

3. Մրցութային հանձնաժողովի իրավասությունները

6. Հանձնաժողովն իրավասու է՝

1) եզրակացություն տալ գիտական խորհրդին համալսարանի թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթում թեկնածուների ներկայացրած փաստաթղթերի՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգին համապատասխանության վերաբերյալ.

2) եզրակացություն տալ գիտական խորհրդի պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչման թեկնածության համար ներկայացված փաստաթղթերի՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգին» համապատասխանության վերաբերյալ.

3) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, սույն աշխատակարգով, համալսարանի գիտական խորհրդի և ներքին իրավական այլ ակտերով իրեն վերապահված լիազորություններ.

4) հանձնաժողովի անդամն իրավունք ունի մասնակցելու համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և պաշտոնների տեղակալման կանոնադրությամբ նախատեսված միջոցառումներին:

4. Մրցութային հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

7. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովում հարցերը քննարկվում են՝

1) գիտական խորհրդի և ռեկտորի հանձնարարությամբ.

2) պրոֆեսորի, դոցենտի և ամբիոնի վարիչի պաշտոնների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթներին մասնակցելու հայտ ներկայացրած, ինչպես նաև պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու համար գիտական խորհրդի նախագահին դիմած անձանց ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը իրավական ակտերին և կանոնակարգերին ստուգելու, գիտական խորհրդին ներկայացնելու համար:

8. Հանձնաժողովի նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է հանձնաժողովի՝ նրա կողմից նշանակված անդամը: Հանձնաժողովի նիստերն անցկացվում են նախագահողի կողմից առաջարկվող օրակարգով:

9. Հանձնաժողովի քարտուղարը նիստի օրակարգը և նյութերը հանձնում է անդամներին նիստից հինգ աշխատանքային օր առաջ:

10. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:

11. Հանձնաժողովի փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

12. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են, որը ստորագրում են նախագահն ու քարտուղարը: Արձանագրությունը պահվում է հանձնաժողովի քարտուղարի մոտ:

13. Հանձնաժողովի անդամն առանձին կարծիքի իրավունք ունի, որը գրավոր հանձնվում է համալսարանի գիտական խորհրդին: